ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք, էլ. փոստ:gnumner.kanach@yerevan.am

Ք. Երևան 14 սեպտեմբերի 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԾԱԾԿԱԳԻՐ՝ ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-23/27

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-23/27 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտ է ներկայացրել նաև ԴՈՆԵՌ ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 01052798, գործունեության հասցե՝ ք.Երևան Գայի 51/5, էլ. փոստ՝ donernorq@yandex.ru/ (այսուհետ՝ Մասնակից):

31.08.2023 թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը Մասնակցի հայտում արձանագրել էր անհամապատասխանություններ, ուստի նիստը կասեցվել էր և Մասնակցին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները:

04.09.2023 թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Մասնակիցը սահմանված ժամկետում չի ներկայացրել անհամապատասխանությունների շտկումները, ուստի Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, որոշում եմ՝ ԴՈՆԵՌ ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԲԵԳՈՅԱՆ